Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱՄ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 8. Արարատի մարզ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-30.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01. 01.2024-30.12.2024թթ |
| Ներկայացման օր | 07. 0.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արմինե Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 47 շահառուի Արարատի մարզի Արտաշատ և Մասիս համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 9 դեպքի վարում (աջակցող միջոցի ստացման կազմակերպում):
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Կենտրոնում կազմակերպվել է 5 միջոցառում, որոնց մասնակցել են ճաշարանի 7 շահառու:

  **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 47 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 47 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 11 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 12 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները տեղադրվել են եռամսյակային հաշվետվությունների մեջ:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Սոցիալական աշխատողը մասնակցել է աջակցության խորհրդի նիստերին, ընթացքում դիտարկվել են տարբեր դեպքեր, կատարվել են տնայցեր:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 48/47 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 39 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 45 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ - 45 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 45 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 45 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 45 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 6 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միխիթարյան* «07» 01. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)